





**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**БИОБИБЛИОГРАФИЯ
АРМЯНСКИХ ИСКУССТВОВЕДОВ
N 10**

КАРИНЕ ХУДАБАШЯН

**Вступительная статья
Анаит Багдасарян**

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2023**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS**

**BIOBIBLIOGRAPHY OF ARMENIAN ART CRITICS
N 10**

KARINE KHUDABASHYAN

**Introduction by
Anahit Baghdasaryan**

**YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2023**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
N 10**

ԿԱՐԻՆԵ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ

**Ներածականը՝
արվեստագիտության թեկնածու
Անահիտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ**

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2023**

ՀՏԴ 01:7.072
ԳՄԴ 91.9:85.31
Խ 960

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա Ասատրյան

Մատենագիտությունը կազմել են
արվեստագիտության թեկնածու **Անահիտ Բաղդասարյանը**,
արվեստագիտության դոկտոր **Նազենիկ Սարգսյանը**

Կարինե Խուդաբաշյան: Կենսամատենագիտություն /
Խ 960 Կազմ.՝ Ա. Բաղդասարյան, Ն. Սարգսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատ., 2023.- 64 էջ:

Մատենագիտությունն ընդգրկում է Կ.Խուդաբաշյանի՝
1952-2015 թվականների տպագիր աշխատանքների ցանկը՝ նրա
գիտական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկով:

ՀՏԴ 01:7.072
ԳՄԴ 91.9:85.31

ISBN 978-5-8080-1513-5
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2023

ԿԱՐԻՆԵ ԷՄԱՆՈՒԵԼԻ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Կարինե Խուդաբաշյան՝ գիտնական, Հայաստանում և այլուր հայտնի, անվանի երաժշտագետ-տեսաբան, պատմաբան, հրապարակախոս, երաժշտական քննադատ, գիտության անխոնջ կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի բազմամյա վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ավանդական երաժշտության միջազգային խորհրդի (ICTM) անդամ:

Կարինե Էմանուելի Խուդաբաշյանը ծնվել է 1929թ. հուլիսի 7-ին Թբիլիսիում: Սերում է Երևանի և Լոռվա Խուդաբաշյանների և Խանադյանների ազնվականներից և Նախիջևանի Եդիգարյանների տոհմիկ մտավորականներից: Հայրը՝ Էմանուել Խուդաբաշյանը, ճանաչված ճարտարագետ-շինարար էր, մայրը՝ Ռեգինա Եդիգարյանը՝ շնորհալի դաշնակահարուհի և մանկավարժ:

Խուդաբաշյանը Երևանի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի շրջանավարտներից է (Ռ.Անդրիասյանի դաշնամուրի դասարան): Նրա ուսուցիչներն են եղել նաև Մ.Տոնյանը, Լ.Պուլիկը, Վ.Բելկևիչը, Հ.Գինոսյանը և ուր.:

1952թ. Խուդաբաշյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետը: Նրան դասախոսել են Մ.Տերյանը (սոլֆեջիո), Ռ.Աթայանը և Տ.Տեր-Մարտիրոսյանը (հարմոնիա), Գ.Չեբոտարյանը (պոլիֆոնիա), Ս.Կոպտևը (երաժշտական ձևի վերլուծություն), Գ.Տիգրանովը և Ա.Բարսամյանը (արևմտաեվրոպական և ռուսական երաժշտության պատմություն), Զ.Վարդանյանը (երաժշտության համընդհանուր

պատմություն) և ուր.:

Ուսման տարիներին Խուդաբաշյանը բազմիցս զեկուցումներով ելույթներ է ունեցել ուսանողական գիտաժողովներին («Ռիմսկի-Կորսակովի օպերայի մասին», «Պուշկինը երաժշտության մեջ» և այլն): «Գրիգոր Եղիազարյանի սիմֆոնիկ ստեղծագործությունը» խորագրով դիպլոմային աշխատանքը (գիտ. ղեկավար՝ պրոֆեսոր Գ.Տիգրանով) կոմպոզիտորին նվիրված մեզանում առաջին մենագրության հիմքը հանդիսացավ հետագայում:

1953 թվականից Խուդաբաշյանը պրոֆ. Բ.Քուշնարյանի գիտական ղեկավարությամբ սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Ն.Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի և ապա Հայկ.ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրայում:

Խուդաբաշյանը ժամանակակից երաժշտագիտության դասականներ Գ.Տիգրանովի, Բ.Քուշնարյանի, Յու.Տյուլինի սանը և հետևորդն է: Նրա ստեղծագործական անհատականության ձևավորմանը մեծապես նպաստել են նաև հայտնի երաժշտագետ-ֆոլկլորագետներ Ա.Քոչարյանը, Վ.Հոշովսկին և ամուսինը՝ նշանավոր պատմաբան, հայագետ, արևելագետ Գ.Սարգսյանը:

Խուդաբաշյանի բազմամյա, բազմակողմանի և բազմաբեղուն գիտահետազոտական գործունեության հիմնական ոլորտը հայ երաժշտությունն էր՝ ավանդական (ժողովրդական, աշուղական) և կոմպոզիտորական (դասական, ժամանակակից): Երաժշտագետի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն և ընդգրկուն էր, սակայն նախապատվությունը մշտապես տրվել է տեսական երաժշտագիտությանը: Այսպես, 1970թ. Խուդաբաշյանը հաջողությամբ պաշտպանեց “Ранний этап развития многоголосия в армянской музыке”¹ («Բազմաձայնության

¹ Սույն կենսամատենագիտության հայերեն «Ակնարկում...» Խուդաբաշյանի աշխատությունների վերնագրերը և ենթավերնագրերը ներկայացնում են երկու լեզվով՝ ռուսերեն և հայերեն, նախ՝ բնագրի լեզվով (մեծ մասամբ՝ ռուսերեն), և ապա փակագծերում՝ նույնի թարգմանությամբ: Ռուսերեն «Ակնարկում»

զարգացման վաղ շրջանը հայ երաժշտության մեջ») խորագրով թեկնածուական ատենախոսությունը (գիտ. ղեկավարներ՝ Ք.Քուշնարյան և Յու.Տյուլին): 1977թ. ատենախոսությունը հրատարակվեց Հայկ.ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կողմից որպես մենագրություն՝ “Армянская музыка на пути от монодии к многоголосию” («Հայ երաժշտությունը մոնոդիայից դեպի բազմաձայնություն») խորագրով: Սա առաջին երաժշտատեսական հետազոտությունն է՝ նվիրված հայ կոմպոզիտորական դպրոցի վաղ, սակավ լուսաբանված, սակայն ազգային կոմպոզիտորական երաժշտության հետագա ընթացքի համար խիստ կարևոր մինչկոմիտասյան շրջանին: Հեղինակը դիտարկում է բազմաձայնության ձևավորման և հարմոնիկ յուրատեսակ «մոդելների» ստեղծման գործընթացը հայ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ: Հեղինակն անդրադառնում է Կոմիտասի անմիջական նախորդների՝ Ք.Կարա-Մուրզայի, Ն.Տիգրանյանի և Մ.Եկմալյանի կյանքին և գործունեությանը, նրանց կողմից իրականացված հայ ժողովրդական (գեղջկական, քաղաքային), ժողովրդամասնագիտացված (ժողովրդապրոֆեսիոնալ, հատկապես աշուղական) և մասնագիտացված (պրոֆեսիոնալ՝ հոգևոր և աշխարհիկ) մոնոդիաների բազմաձայն մշակումներին: Մենագրության մեջ առաջին անգամ նշված կոմպոզիտորների ստեղծագործությունը դիտարկվում է ԺԹ դարի վերջի և Ի դարի սկզբի եվրոպական և մասնավորապես ռուսական երաժշտության ավանդույթների և զարգացման միտումների հունով: Այս ժամանակաշրջանը համաշխարհային երաժշտարվեստում, ինչպես հայտնի է, նշանավորվեց ազգային կոմպոզիտորական դպրոցների ձևավորմամբ և այնպիսի երկերի ստեղծմամբ, որոնցում համաեվրոպական մասնագիտացված (կոմպոզիտորական) երաժշտության նվաճումները համադրվում են ազգային երաժշտական արվեստի արտահայտչամիջոցների ամենալայն շրջանակի հետ: Հեղինակը բացահայտում և իմաստավորում է Կարա-Մուրզայի և հատ-

(“Очерк...”) աշխատությունների վերնագրերը և ենթավերնագրերը թարգմանում են միայն այն դեպքում, եթե դրանց բնագրային լեզուն հայերենն է:

կապես Ն.Տիգրանյանի և Մ.Եկմայանի երկերում առկա մի շարք անսովոր երևույթներ եվրոպական դասական հարմոնիայի տեսանկյունից: Բազմաձայնության վերլուծությունը նշված կոմպոզիտորների երկերում հուղաբաշանին հանգեցրեց այն եզրակացության, որ համահնչյունների (ակորդների) ընտրությունը, դրանց հաջորդականությունը, տոնայնությունների փոփոխությունը և հարմոնիկ լեզվի մյուս մանրամասները մեծ մասամբ պայմանավորված են հայկական մոնոդիաների ծայնակարգային (լադային) ինքնատիպությամբ: Այլ կերպ ասած՝ հայ կոմպոզիտորական դպրոցի արդեն իսկ վաղ շրջանում. «...հարմոնիան հասունանում էր ազգային մոնոդիայի հիմքով»²: Այս օրինակափությունը, ինչպես հայտնի է, արտահայտվեց (ամեն անգամ յուրովի) ապագայի հայ բոլոր մեծ կոմպոզիտորների երկերում: Մենագրությունը բարձր գնահատվեց որպես կարևոր ներդրում խորհրդային երաժշտագիտության մեջ³:

Բազմաձայնության «հորիզոնական և ուղղահայաց» չափորոշիչների կամ ծայնակարգի և հարմոնիայի փոխներգործությունը դարձավ դիտարկման առարկա նաև “О некоторых принципах обработки народного материала в творчестве А.Спендиарова (Истоки стиля и его развитие)”, «Ա.Սպենդիարյանի ստեղծագործության մեջ ժողովրդական նյութի մշակման որոշ սկզբունքների մասին» (Ոճի ակունքները և զարգացումը)⁴ ուսումնասիրություններում:

Երկար տարիներ հուղաբաշանը զբաղվել է ծայնակարգի (լադի) խնդիրներով, որը, ինչպես հայտնի է, հայ տեսական

² Տե՛ս Յու.Տյուլինի գրախոսականը հուղաբաշանի թեկնածուական ատենախոսության մասին, 14.06.70թ., էջ 4: Գրախոսականը գտնվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պահոցում (արխիվում):

³ Նույն տեղում, էջ 3:

⁴ Տե՛ս “Александр Спендиаров”. Статьи и исследования, АН Арм.ССР, Институт искусств, Ереван, 1973, сс. 52–85; տե՛ս նաև Карине Худабашян, “Армянская музыка в аспекте сравнительного музыкознания”, Ереван, НАН РА, Институт искусств, 2011, сс. 218–245 («Հայ երաժշտությունը համեմատական երաժշտագիտության տեսանկյունով»):

երաժշտագիտության հետազոտական գլխավոր ոլորտներից է: Ձայնակարգային թեման սկիզբ առավ Խուդաբաշյանի դեռևս թեկնածուական աշխատության մեջ, երբ հայ բազմաթիվ մոնոդիաների մանրակրկիտ վերլուծության շնորհիվ հեղինակը նորովի դիտարկեց և մեկնաբանեց առաջին հայ կոմպոզիտորների երկերի հարմոնիկ կառուցվածքը՝ վերջինիս մեջ «տեսնելով» մոնոդիկ երաժշտության ձայնակարգերի յուրօրինակության արտացոլումը՝ պրոյեկցիան:

Նույն շրջանի մեկ այլ՝ “Кварто-квинтовая структура и ангемитоника в армянской народной песне” («Կվարտ-կվինտային կառույցը և անհեմիտոնիկան հայ ժողովրդական երգում») աշխատության մեջ⁵ Խուդաբաշյանը, շարունակելով և զարգացնելով Սպ.Մելիքյանի, Ք.Քուշնարյանի և Կ.Կվիտկայի արտահայտած գաղափարները, առաջնորդվելով ֆոլկլորից քաղված բազմաթիվ օրինակներով, հիմնավորում է անհեմիտոն ձայնակարգերի բնորոշությունը հայկական ժողովրդական երգերի համար: Միաժամանակ հեղինակը դրանք համարում է կվարտ-կվինտային և ոչ տեղցիային կառուցվածքի այլ համահնչյունների գոյացման նախապայմանը կոմիտասյան երկերում:

Այնուհետև “Античная система ладозвукорядов и ладозвукоряды армянской монодической музыки” (Опыт сравнительного анализа), («Ձայնակարգային հնչյունաշարերի անտիկ համակարգը և հայ մոնոդիկ երաժշտության ձայնակարգային հնչյունաշարերը», Համեմատական վերլուծության փորձ) աշխատության մեջ⁶ ձայնակարգային թեման զարգանում է համեմատա-

⁵ Տե՛ս Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական գիտական III կոնֆերանս: Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1977, էջ 157: Հոդվածը՝ “Кварто-квинтовая структура и ангемитоника в армянской народной песне и в творчестве Комитаса”, («Կվարտ-կվինտային կառույցը և անհեմիտոնիկան հայ ժողովրդական երգերում և Կոմիտասի ստեղծագործության մեջ») տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 80–93.

⁶ Տե՛ս Մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցերին նվիրված կոնֆերանս: Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1984, էջ 47–51; հոդվածը տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 35–59.

կան երաժշտագիտության հունով: Հիմնվելով անտիկ տեսաբանների կողմից մշակված ծայնակարգային հնչյունաշարերի կառուցվածքային սկզբունքների վրա, նկատի ունենալով կոմիտասյան փորձն այս ոլորտում, վերլուծելով ժողովրդական, ժողովրդապրոֆեսիոնալ և պրոֆեսիոնալ բազմաթիվ մոնոդիաներ, Խուդաբաշյանն առաջարկում է «Երկօկտավային ծայնակարգային հնչյունաշարի լրիվ կատարյալ մոդուլյացիոն համակարգի»⁷ իր տարբերակը: Այն, ըստ գիտնականի, ընկած է հայ մոնոդիկ երաժշտության հիմքում և մի շարք եզրերով առնչվում է ծայնակարգային հնչյունաշարերի անտիկ համակարգի հետ: Վերջինս «...չի նշանակում, որ անտիկ ծայնակարգերը ազդել են հայ մոնոդիկ երաժշտության ծայնակարգերի վրա, այլ հետևանք է այն բանի, որ անտիկ գիտնականների կողմից ստեղծված մոնոդիկ երաժշտության կատարյալ տեսությունը արտացոլում է Հին Հունաստանի և Բյուզանդիայի հետ մշտապես առնչվող մի շարք ժողովուրդների մոնոդիկ երաժշտության առանձնահատկությունները»⁸:

Հնչյունաշարերի ինտերֆերենցիան, այն է. «...մի քանի ավտոնոմ (ինքնուրույն՝ Ա.Բ.) հնչյունաշարերի միակցումն ու համադրումը, նաև դրանց փոխադարձ կապի բացահայտումը»⁹, Խուդաբաշյանը կիրառել է “Трактовка ладовой системы армянской монодической музыки классиками армянского музыкознания” (Опыт интерференции звукорядов), («Հայ մոնոդիկ երաժշտության ծայնակարգային համակարգի մեկնությունը հայ երաժշտագիտության դասականների կողմից» (Ծայնակարգերի ինտերֆերենցիայի փորձ) աշխատության մեջ¹⁰: Ուսումնասիրելով Հ.Լի-

⁷ Տե՛ս “Армянская музыка в аспекте...”, с. 41:

⁸ Նույն տեղում, էջ 59:

⁹ Տե՛ս Гошовский В.Л., “Горани. К типологии армянской песни” (Опыт исследования с помощью ЭВМ), Ереван, 1983, с. 55.

¹⁰ Տե՛ս Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական գիտական VI կոնֆերանս: Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 248–250: Հոդվածը տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 104–106:

մոնջանի, Ն.Տիգրանյանի, Կոմիտաս վարդապետի, Սպ.Մելիք-
յանի ծայնակարգային հայեցակարգերը (կոնցեպցիաները) և ի
մի բերելով դրանք՝ հեղինակը մոդելավորել է ինտերֆերենցիայի
սկզբունքով կազմված միասնական ծայնակարգային հնչյունա-
շար, որն արտացոլում է հայ մոնոդիկ երաժշտության ծայնակար-
գային համակարգի առանձնահատկությունները ազգային երա-
ժշտագիտության դասականների պատկերացմամբ:

Ծայնակարգի ուսումնասիրության մեթոդաբանության մեջ
արժեքավոր ներդրում է Խուդաբաշյանի “Система модулей и ее
использование в описании ладовой структуры народной песни”
(«Մոդուլների չափորոշիչների համակարգը և դրա կիրառումը
ժողովրդական երգի ծայնակարգի նկարագրության ընթաց-
քում») աշխատությունը¹¹: Այստեղ՝ Հայաստանում, 1927թ.-ից
հրապարակված բոլոր ժողովրդական երգերի (շուրջ 1000 նմուշ)
ծայնակարգային վերլուծության հիմքով մանրամասն մշակվել,
համակարգի է բերվել և ներկայացվել հեղինակի ծայնակարգա-
յին հայեցակարգը՝ «ծայնակարգ», «ծայնակարգային հնչյունա-
շար», «ելևէջ» (ինտոնացիա) և այլ հասկացությունների սահմա-
նումից մինչև ծայնակարգի քանակային և որակային ցուցիչներ:
Միաժամանակ աշխատության մեջ ներկայացված է նաև հեղի-
նակի կողմից մշակված մոդուլների՝ պայմանական նշանների
թվագրական համակարգը, որի միջոցով նկարագրվում է երգի
ծայնակարգը: Մոդուլների այս համակարգը հաջողությամբ
փորձարկվել է Վ.Հոշովսկու կողմից ժողովրդական երգի ծայնա-
կարգային կառուցվածքի վերլուծության ընթացքում էլեկտրոնա-
յին համակարգիչ մեքենայի (ЭВМ) միջոցով¹²: Համակարգը՝ որ-
պես վերլուծական ծրագիր, կարող է արդյունավետ գործի դրվել
նաև ժամանակակից համակարգչային (կոմպյուտերային) տեխ-
նոլոգիաներում:

¹¹ Աշխատությունը գրվել է 1978թ.: Առաջին անգամ հրապարակվել է “Тра-
диции и современность” (Вопросы армянской музыки), книга 2, Ереван, 1996,
сс. 127–140; տե՛ս նաև “Армянская музыка в аспекте...”, сс. 9–19:

¹² Гошовский В.Л., “Горани”, сс. 26–35, 55–56.

Ձայնակարգի խնդրին նվիրված հետազոտությունների տրամաբանական շարունակությունն ու զարգացումն է “Античная музыкально-космологическая концепция регистровой дифференциации полной совершенной системы и ее проявление в армянской музыке” («Լրիվ կատարյալ համակարգի հնչունասահմանային (ռեգիստրային) տարբերացման (դիֆերենցիացիայի) անտիկ երաժշտատիեզերաբանական հայեցակարգը և դրա դրսևորումը հայ երաժշտության մեջ») աշխատությունը¹³։ Հայ մոնոդիկ երաժշտության ձայնակարգերի հնչունաշարերը խնդրո աշխատության մեջ դիտարկվում են Հին աշխարհի երաժշտատիեզերաբանական հայեցակարգի, այսինքն՝ տիեզերքի առաջնային քառանդամ (երկիր, ջուր, օդ, հուր) և հնգանդամ (երկիր, ջուր, օդ, հուր, եթեր) տարրերի տեսանկյունից։ Բացահայտվում են հնչունասահմանի (ռեգիստրի) և ձայնակարգի, հնչունասահմանի և ժանրի փոխկապակցությունները, նաև Կոմիտաս վարդապետի նոտագրության սկզբունքները, կապված հնչունասահմանային շերտերի հետ։

Խուրաբաշյանն անդրադարձել է նաև հայ ժողովրդական և աշուղական երգի վանկաչափական կառույցի հարցերին. “Аманак, Ванкачпутюн (Мора, Просодия)”¹⁴, «Հայ ավանդական երգի տաղաչափական համակարգի շուրջ» (“К вопросу о стихометрической системе армянской традиционной песни”)¹⁵, “Стихотметрическая система ашугских песен в трактовке Гарегина Ле-

¹³ Տե՛ս Հայ արվեստին նվիրված հանրապետական ութերորդ գիտական կոնֆերանս։ Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1997, էջ 84–86։ Հոդվածը տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс.60–79։

¹⁴ Տե՛ս Հայ արվեստին նվիրված հանրապետական յոթերորդ գիտական կոնֆերանս։ Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1995, էջ 98–100։ Հոդվածը՝ “Система музыкально-речевого стихосложения в трактовке Комитаса. Аманак, ванкачпутюн (Мора, Слогометрика)” («Երաժշտախոսքային տաղաչափության համակարգը Կոմիտասի մեկնաբանությամբ։ Ամանակ, վանկաչափություն») տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 111–116։

¹⁵ Տե՛ս Հայ ժողովրդական մշակույթի հանրապետական նստաշրջան, IX, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 23–24։

воняна” («Աշուղական երգերի տաղաչափական համակարգը Գարեգին Լևոնյանի մեկնաբանությամբ»)¹⁶, “Стихометрическое искусство ашуга Дживани” («Աշուղ Զիվանու տաղաչափական արվեստը»)¹⁷:

Ժամանակակից երաժշտական ֆոլկլորագիտության համար այժմեական է նաև ժողովրդական երգի համալիր երաժշտաբանաստեղծական վերլուծությունը, որի միջոցով հնարավոր է ի հայտ բերել և ամբողջացնել երգի ոճական ողջ նկարագիրը: Այս տեսանկյունով է գրել Խուդաբաշյանն իր “Целостный или комплексный этномузыкалогический анализ” («Ամբողջական կամ համալիր էթնոերաժշտագիտական վերլուծություն») աշխատությունը¹⁸: Հեղինակը դիտարկում է Բ.Բարտոկի, Ա.Չեկանովսկայայի, Զ.Էսթրայիեռի, Ա.Ռուդնևայի և մյուսների հետազոտական հարուստ փորձն այս ոլորտում: Նշում է, որ «Ժողովրդական երգի ամբողջական էթնոերաժշտագիտական վերլուծության դասական օրինակ է Կոմիտասի «Լոռու գութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով» հոդվածը: Այն ստեղծվել է ավելի վաղ, քան Բ.Բարտոկի աշխատությունները, բայց մինչև օրս մեկ (սակայն ծավալուն) երգի էթնոերաժշտագիտական հետազոտության չգերազանցված նմուշ է հանդիսանում»¹⁹: Խուդաբաշյանն իր աշխատության մեջ «Խաբեք մորս՝ վիրավոր եմ ես» հայ ժո-

¹⁶ Տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 180–185:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 186–187:

Հարկ է նշել, որ հայ ավանդական երաժշտության տաղաչափությանն անդրադարձել են հայ տեսական երաժշտագիտության դասականներ Ե.Տնտեսյանը, Կոմիտաս վարդապետը, նաև ժամանակակից հայ երաժշտագետներ Ն.Թահմիզյանը, Կ.Ջաղացյանյանը, Ա.Փահլևանյանը, Դ.Դանիելյանը, Ա.Բաղդասարյանը: Սակայն հայ ավանդական երաժշտության այս հույժ կարևոր ոլորտը, որի դիտարկումը նպաստում է խնդրո նյութի առավել խորքային, կայուն, տիպաբանական կառույցների բացահայտմանը, մեզանում դեռևս չի ենթարկվել համակարգված, համակողմանի և մանրամասն ուսումնասիրության:

¹⁸ Տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 23–34:

¹⁹ Նույն տեղում, էջ 26:

ղովրդական երգի ուսումնասիրության միջոցով²⁰ ներկայացնում է իր իսկ կազմած աղյուսակը²¹ (հայոց և ռուսաց լեզուներով), որն ընդգրկում է «Ժողովրդական երգի ալգոռիթմիկ տեսական վերլուծությունը 15 չափանիշներով»²²: Վերջիններս կապված են երգի բանաստեղծական տեքստի, մեղեդու և տաղաչափության (կվանտիտատիվ) հետ: Աշխատությունը կարևոր նշանակություն ունի երաժշտական ֆոլկլորի վերլուծության մեթոդաբանության տեսանկյունով, իսկ նշված աղյուսակը կարող է հիմք հանդիսանալ հայ (և ոչ միայն) ժողովրդական երգի համալիր վերլուծության համակարգչային ծրագրի ստեղծման համար:

Հայ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ սկիզբ առած մեկ այլ ուղղության արտացոլումն է Խուդաբաշյանի «Կարոս խաչ» վիպերգի բանաստեղծական տեքստի կրոնաառասպելական արմատները» (Սեմանտիկ վերլուծության փորձ), («Религиозно-мифологические корни поэтического текста эпической песни “Карос хач” (Опыт семантического анализа) աշխատությունը²³: Նշված ուղղությունը համադրում է ազգագրության դիցաբանական դպրոցի և երաժշտական ֆոլկլորագիտության նվաճումները: Խուդաբաշյանը հետազոտում է հնագույն ժողովրդական երգի էպիկական ժանրի այս սքանչելի օրինակի իմաստաբանական (սեմանտիկ) կապերը հայերի հեթանոսական և քրիստոնեական պատկերացումների հետ:

Խնդրո նյութի բազմակողմանի դիտարկման սկզբունքով են «լուծված» Խուդաբաշյանի՝ հայ կոմպոզիտորների երաժշտաբեմական ստեղծագործություններին նվիրված աշխատությունները: Դրանք են՝ «Автор либретто оперы “Алмаст” А.Спендиарова – София Парнок» («Ա.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի

²⁰ Նույն տեղում, էջ 27–29:

²¹ Նույն տեղում, էջ 30–31:

²² Նույն տեղում, էջ 27–28:

²³ Տե՛ս «Традиции и современность», книга 2, էջ 220–228, տե՛ս նաև «Религиозно-мифологические корни эпической песни “Карос хач” (опыт семантического анализа), в “Армянская музыка в аспекте...”, сс. 156-169:

լիբրետոյի հեղինակը՝ Սոֆյա Պարնոկ)»²⁴, «Ժանրի պարադոքսները» (կամերային կոմիկական օպերայի խնդիրը Հայաստանում), («Парадоксы жанра», проблема камерной комической оперы в Армении)²⁵, “Степень верности оригиналу” (о балете Г.Егизаряна “Ара Прекрасный”), («Բնագրին հավատարիմ լինելու աստիճանը» (Գ.Եղիազարյանի «Արա Գեղեցիկ» բալետի մասին)»²⁶, «Տ.Չուխաջյանի «Արշակ II» օպերայի ժանրային բնորոշումը» (Հայոց պատմությունը հայկական օպերայում), («Жанровое определение оперы Тиграна Чухаджяна “Аршак II” (Армянская история в армянской опере)»²⁷: Հեղինակը մանրամասն հետազոտել է նշված օպերաների և բալետի գրական բնագրերը՝ առասպելը («Ալմաստ»), հեքիաթը (Վ.Աճեմյանի «Կիկոսի մահը» կամերային օպերան), առասպելը («Արա Գեղեցիկ»), հայոց միջնադարյան պատմության իրադարձությունները («Արշակ II») և դրանց արտացոլումն ու մարմնավորումը լիբրետոյի և երաժշտության մեջ:

Նույն հունով է ծավալվում “Жанр духовного стиха в эпической песенной поэзии Армении” (на примере сказания о св.Алексаносе), («Հոգևոր տաղի ժանրը Հայաստանի էպիկական երգային պոեզիայում»), (Սուրբ Ալեքսանոսի մասին ավանդազրույցի օրինակով) աշխատությունը²⁸, որի շրջանակներում ավանդազրույցը դիտարկվում է իր «բովանդակային, կերպարային, բանաստեղծական և երաժշտական բաղադրիչների ամբողջությամբ»:

Հարկ է նշել, որ խնդրո ամբողջական երաժշտաբանաստեղծական վերլուծությունը՝ ամենատարբեր բնույթի՝ դիցաբա-

²⁴ Տե՛ս Александр Спендиаров. Статьи и исследования, сс. 187–210:

²⁵ Տե՛ս «Սովետական արվեստ», Երևան, 1982, № 7, էջ 30–37:

²⁶ Տե՛ս “Советская музыка”, 1987, № 3, сс. 40–44:

²⁷ Տե՛ս «Ավանգարդ», 1999, թիվ 14; հոդվածի ուսերեն տարբերակը Տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 246–251:

²⁸ Տե՛ս Международная конференция “Музыкальная культура в преддверии XXI века” (Тиграновские чтения). Тезисы докладов, Ереван, 1998, сс. 26–27; հոդվածը տե՛ս “Армянская музыка в аспекте...”, сс. 170–179:

նական, պատմական, քաղաքական, գեղարվեստական երևույթների լայն շրջանակի ընդգրկումով, Խուդաբաշյանի ստեղծագործական ոճի գլխավոր հատկանիշներից է, որ ծառայում է ուսումնասիրության առարկան իր ողջ «բազմերանգությամբ» գիտակցելու և լուսաբանելու նպատակին: Այս իրողությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանք են՝ գիտնականի պրպտող միտքը, լայն մտահորիզոնը, բազմագիտակությունը (էրուդիցիան), որ կանխորոշում են մտքի բացառիկ լայնախոհությունն ու ազատությունը նրա երկերում: Դա և Գ.Տիգրանովի, Ք.Քուշնարյանի, Յու.Տյուլինի, Ա.Քոչարյանի, Վ.Հոշովսկու, Գ.Սարգսյանի դարոցի գիտական ավանդույթների գործոնն է, նշանավոր այն գիտնականների, որոնց հետ Խուդաբաշյանին բախտ վիճակվեց մշտապես լինել ստեղծագործական կապի մեջ, և որոնց նա հիշում էր երախտագիտությամբ և խոնարհումով:

Խուդաբաշյանի գիտական հետաքրքրությունների ոլորտում է նաև Արևելքի բանավոր ավանդույթի մասնագիտացված երաժշտությունը: Այսպես, Հայաստանում կենցաղավարվող մուղամների վերաբերյալ զեկուցումներով Խուդաբաշյանը հանդես է եկել միջհանրապետական գիտատեսական կոնֆերանսում, Տաշքենդում՝ “Мугамы в творчестве армянских композиторов конца XIX начала XX века” (Н.Ф.Тигранян, А.А.Спендиаров), («Մուղամը XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ» (Ն.Թ.Տիգրանյան, Ա.Ա.Սպենդիարով)²⁹, միջազգային երաժշտագիտական սիմպոզիումում Սամարղանդում՝ “Форма-структура и принципы формирования в мугамах, записанных в Армении в конце XIX века” («Ձև-կառուցվածքը և ձևագրայցման սկզբունքները XIX դարի վերջին Հայաստանում գրառված մուղամներում»)³⁰:

²⁹ Տե՛ս “Макомы, мугамы и современное композиторское творчество”, сборник, Ташкент, 1978, сс. 153–161; տե՛ս նաև “Армянская музыка в аспекте...”, сс. 252–257:

³⁰ Տե՛ս “Профессиональная музыка устной традиции народов Ближнего, Сред-

Նշված զեկուցումներում դիտարկվում են 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին Հայաստանում տարածված և Ն.Տիգրանյանի ու Ա.Սպենդիարյանի կողմից մուղամաթի լավագույն հայ կատարողներից գրառված մուղամների թեմատիզմի նշանակությունը, ձայնակարգային յուրօրինակությունը, ձևագոյացման առանձնահատկությունները, որոնք մեծապես պայմանավորված են կարգավորված (ռեգլամենտացված) իմպրովիզացիայի սկզբունքներով: Այդ մուղամները հիմք հանդիսացան նշված կոմպոզիտորների մի շարք դաշնամուրային, վոկալ և սիմֆոնիկ երկերի ստեղծման համար: Հեղինակը նշում է Հայաստանում տարածված մուղամների ձևին հատուկ լակոնիզմը, կանոնավոր և կուռ կառուցվածքը՝ վերջինս ընդգծելով որպես մեզանում այս ժանրի մեկնության յուրահատկություն:

1960 թվականից Խուդաբաշյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ երաժշտության բաժնում, սկզբում՝ որպես կրտսեր և ապա 1978թ.՝ ավագ գիտաշխատող: Այստեղ նա ավարտում, պաշտպանում և հրատարակում է իր թեկնածուական ատենախոսությունը, հրատարակման նախապատրաստում և հրատարակում հայ անվանի կոմպոզիտոր Գ.Եղիազարյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված գիրքը³¹:

Նույն տարիներին են ստեղծվում «Ալմաստ» օպերային, մուղամներին, Կոմիտասի նախորդներին³², Քուշնարյանին նվիրված աշխատությունները³³, հոդվածներ հանրագիտարաններում և այլն: Հարկ է նշել նաև Խուդաբաշյանի կազմած “Музыканты-исполнители Советской Армении” (100 имен), («Խորհրդային Հայաստանի երաժիշտ-կատարողները» (100 անուն),

него Востока и современность”, сборник, Ташкент, 1981, сс. 87–91; տե՛ս նաև. “Армянская музыка в аспекте...”, сс. 204–208.

³¹ «Գրիգոր Եղիազարյան» (“Григор Егиазарян”), Երևան, 1966:

³² Տե՛ս «Կոմիտասը և նրա նախորդները», «Կոմիտասական», Ժողովածու, հ. 2, Երևան, 1981, էջ 5–14: Տե՛ս նաև “Комитас (теоретик и композитор) и его предшественники” в “Армянская музыка в аспекте...”, сс. 209–217:

³³ Տե՛ս “Музыка Востока в исследованиях Христофора Степановича Кушнарева”, “Армянская музыка в аспекте...”, сс. 117–121:

ձեռագիր, “Егише Багдасарян, жизнь и творчество” (1965г.), («Եղիշե Բաղդասարյան՝ կյանքը և ստեղծագործությունը», 1965թ.), ձեռագիր:

Այս տարիներին Խուդաբաշյանը զեկուցումներով ելույթներ է ունենում հանրապետական, համամիութենական և միջազգային տարբեր գիտաժողովներում, վարում Հայֆիլիհարմոնիայի դասական սիմֆոնիկ երաժշտության համերգները, հանդես գալիս մամուլում, համագործակցում մասնագիտական պարբերական հրատարակությունների հետ:

1984–2015թթ. Խուդաբաշյանը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական արվեստի բաժինը (այժմ՝ ժողովրդական երաժշտության բաժին): Այստեղ առավելագույնս դրսևորվեցին Խուդաբաշյանի կազմակերպչական տաղանդը, շրջապատը ստեղծագործական եռանդով լիցքավորելու, ազգային երաժշտական մշակույթի զարգացմանն առավել նպաստող գիտական ծրագրեր մշակելու նրա կարողությունը: Այն է՝ Խուդաբաշյանի հիմնադրած «Հայ ավանդական երաժշտություն» ծայնագրյալ մատենաշարը: Լույս են տեսել մատենաշարի 13 պրակներ, որոնք ներկայացնում են Արևելյան և Արևմտյան Հայաստանի հայոց հարստագույն երաժշտական կենցաղը: Դա նվագարանային (գործիքային) երաժշտությունն է, մասնավորապես պարեղանակները և ծիսական նվագները, պարերգերի նվագարանային տարբերակները և այլն, հայոց ավանդական նվագարաններով՝ փողային (դուդուկ, զուռնա, պարկապզուկ, սրինգ, բլուլ, շվի), լարային (թառ, քեմոնա, քամանչա), հարվածային (դիդ, տմբլա, դափ), տե՛ս մատենաշարի պրակ I (Երևան, 2008), II (Երևան, 2010), կազմող՝ Ա.Մուրադյան: Նշելի է, որ պրակներում ներկայացված նվագարանային նմուշները նոտագրված են պարտիտուրի միջոցով, որը լավագույնս արտացոլում է հայ ավանդական նվագարանային երաժշտության կատարման առավել բնորոշ, բնօրինակ՝ բազմաձայն ձևը: Դրանք են մասնավորապես եռաձայնությունը՝ մեղեդի, դամ, ռիթմիկ ձայն, երկձայնությունը՝ մեղեդի, դամ կամ մեղեդի, ռիթմիկ ձայն: Նշե-

լի է նաև առաջին պրակում առկա համշենահայերի նվագների շարքը, դրանց հատուկ բացառիկ յուրօրինակ մենակատարային բազմաձայնությամբ (երկձայն, եռաձայն, քառաձայն), համշենահայոց ավանդական լարային աղեղնավոր քեմոնա և քամանչա նվագարաններով:

Մատենաշարի չորրորդ պրակը (Երևան, 2009, կազմեց Զ.Թագակցյանը) բովանդակում է տղամարդկանց աշխատանքային երգերի մի ամբողջ զանգված՝ հոռովելներ, տափանի, կալի, սայլի երգեր: Տվյալ պրակն իր ժանրային նկարագրով հայ գյուղացիության հողագործական երգերի մինչ օրս դեռևս եզակի և առավել լիակատար ձայնագրված հավաքածուն է:

Մատենաշարի պրակներում ներկայացված է նաև Քուշնարյանի՝ 1927–1929թթ. (պրակ III, կազմեցին Դ.Դերոյանը և Զ.Թագակցյանը, Երևան, 2008), անվանի ազգագրագետ Ս.Լիսիցյանի՝ 1953–1970թթ. (պրակ VI, կազմեց Մ.Սարգսյանը, Երևան, 2010), Ա.Քոչարյանի (պրակ XIII, կազմեցին Մ.Սարգսյանը և Մ.Տիգրանյանը, Երևան, 2015) գիտական արշավների ընտրանին: Վերջին՝ 13-րդ պրակը նվիրված է բաժնի երկարամյա վարիչ անմոռանալի Կ.Էմ.Խոութաբաշյանի հիշատակին:

Առանձին պրակներով հրատարակվել են Վասպուրականի (պրակ V, կազմող՝ Զ.Թագակցյան, Երևան, 2010), Ալաշկերտի (պրակ VIII, կազմող՝ Մ.Սարգսյան, Երևան, 2012), Ջավախքի (պրակ IX, կազմող՝ Զ.Թագակցյան, Երևան, 2012), Վայոց Ձորի (պրակներ XI, XII, կազմեցին Զ.Թագակցյանը և Հ.Պիկիցյանը, Երևան, 2013, 2014) բազմաժանր երաժշտական ֆոլկլորի նմուշներ: VII և X պրակներում (Երևան, 2012) ամփոփված են հայ էպիկական երգեր և հայոց մեջ տարածված աշուղական սիրավեպեր: Պրակների կազմողն է Ա.Քոչարյանը: Տասներորդ պրակում սիրավեպերի հետ մեկտեղ ներկայացված են հայ աշուղական երգերի վանկաչափական ձևերը Քոչարյանի նկարագրությամբ (հայերեն, նաև ռուսերեն թարգմանությամբ), գիտնականի ձեռագիրը՝ հայ ժողովրդական երաժշտության նոտագրու-

թյան տեխնիկայի և պայմանական նշանների վերաբերյալ:

Հրատարակման է պատրաստ մատենաշարի XIV պրակը (կազմող՝ Զ.Թագակչյան), որի շրջանակներում ամփոփված է Զավախքում ծայնագրված հայ եկեղեցական երաժշտության՝ շարականների, տաղերի, ավետիսների, Սբ.Պատարագի և Ժամագրքի երգերի և այլն, ֆոլկլորային տարբերակների՝ «Ժողովրդական ընթերցումների» եզակի հավաքածուն:

Հրատարակման ընթացքում են մատենաշարի հաջորդ պրակները:

Բաժնում մշակվել և իրագործվել է ժողովրդական երաժշտության քարտավորման և անձնագրավորման գործընթացը: Գիտական գործունեության ոլորտ են ներմուծվել ժողովրդական երգի վանկաչափական վերլուծության մեթոդը, ազգագրության դիցաբանական դպրոցի նվաճումները: Միաժամանակ հետազոտվում են երաժշտական ֆոլկլորագիտության այլ բնագավառների հետ կապված խնդիրներ. օրգանոլոգիա՝ գիտություն ժողովրդական նվագարանների և նվագարանային երաժշտության մասին, մեղեդիական աշխարհագրություն, ժողովրդական երգի համակարգչային վերլուծություն և այլն: Արդյունքները հրապարակվում են:

Դրա հետ մեկտեղ բազմիցս կազմակերպվել են ժողովրդական երաժշտության հավաքման գիտարշավներ Հայաստանի, նաև Վրաստանի տարբեր շրջաններում (Լոռի, Եղեգնաձոր, Գորիս, Շիրակ, Թեյլափ, Սուխում) և այլուր: Գրառվել են հազարավոր ժողովրդական, աշուղական երգեր և նվագներ:

Խուղաբաշյանը ստեղծեց Արվեստի ինստիտուտի առավել եռանդուն, համակարգված, արդյունավետ գործող, թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում հայտնի ստեղծագործական կոլեկտիվներից մեկը:

Խուղաբաշյանի կազմակերպչական տաղանդը դրսևորվեց նաև այն ժամանակ, երբ նա Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի նախագահն էր (1975–1981): Այդ տարիներին բազմիցս կազմակերպվում էին

երաժշտության տեսության, երաժշտական ֆոլկլորագիտության և երաժշտագիտության այլ բնագավառների խնդիրներին նվիրված սեմինարներ, գիտական կոնֆերանսներ, հանդիպումներ անվանի երաժիշտների հետ:

Կոնսերվատորիան ավարտելուց անմիջապես հետո Խուդաբաշյանն իր գրիչը փորձեց հրապարակախոսության բնագավառում: Այնուհետև երաժշտագիտական այս ոլորտը ժանրային ողջ բազմազանությամբ իր կարևոր տեղը գրավեց Խուդաբաշյանի ստեղծագործական կյանքում: Բազմաթիվ երաժշտական ներկայացումների, համերգների գրախոսականների հեղինակ է՝ “Севильский цирюльник” («Սևիլյան սափրիչ»), “Вест-Сайдская история” («Վեստ-Սայդյան պատմություն»), “Тангейзер” («Տանհոյզեր»), “Огненное кольцо” («Կրակե օղակ»), “Концерты Марии Гамбарян” («Մարիա Դամբարյանի համերգները»), “Концерты квартета имени Комитаса” («Կոմիտասի անվան քառյակի համերգները») և այլն: Խուդաբաշյանի մի շարք հոդվածներում ներկայացված են հայ նշանավոր երաժշտական գործիչների ստեղծագործական դիմանկարներ (Ս.Օգանեզավիլի, Ա.Քոչարյան, Հ.Դանիելյան, Զ.Դոլուխանյան, Գ.Չերոտարյան, Ա.Տերտերյան)³⁴: Խուդաբաշյանը հեղինակել է նաև քննադատական հոդվածներ Հայաստանի երաժշտական կյանքի տարբեր ոլորտների մասին, մասնակցել խմբագրատնային զրույցների՝ նվիրված երեխաների գեղագիտական դաստիարակությանը, հայկական ֆիլիարմոնիայի, Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեությանը և այլն: Խուդաբաշյանի հրապարակախոսական «երկերը» լույս են տեսել հանրապետական և համամիութենական պարբերական մամուլում՝ թերթերում (“Коммунист”, “Комсомолец”, «Սովետական Հայաստան», «Ավանգարդ», “Правда”), ամսագրերում («Սովետական արվեստ», “Советская музыка”): Խուդաբաշյանի հոդվածներն

³⁴ Հարկ է հատկապես նշել, որ Խուդաբաշյանն առաջին երաժշտագետն էր, որ հանդես եկավ ժամանակակից ականավոր կոմպոզիտոր Ա.Տերտերյանի ստեղծագործությանը նվիրված ծավալուն վերլուծական հոդվածներով:

աչքի են ընկնում հարուստ տեղեկատվությամբ, մտահորիզոնի բացառիկ լայնությամբ, երբեմն քննադատական սուր շնչով: Միաժամանակ դրանք անաչառ են, կարդացվող և բանականության, բազմագիտության (էրուդիցիայի) և հուզականության ներդաշնակ միասնության օրինակ կարող են ծառայել:

Խուդաբաշյանի ստեղծագործական գործունեությունը պսակվեց «Հայ երաժշտությունը համեմատական երաժշտագիտության տեսանկյունով» վերտառությամբ գրքով (Երևան, 2011): Վերջինիս շրջանակներում ի մի են բերված գիտնականի 27 աշխատություններ, որոնք ստեղծվել են տարբեր տարիների և մեծ մասամբ հրապարակվում են առաջին անգամ, մինչ այդ հրապարակվել են միայն հիմնադրույթների (թեզիսների) ձևով: Գիրքը բաղկացած է հինգ տարբեր բովանդակության գլուխներից, որոնք նվիրված են ժողովրդական երաժշտության վերլուծության մեթոդաբանությանը (գլուխ I), ձայնակարգային համակարգերին (գլուխ II), երաժշտախոսքային (կվանտիտատիվ) տաղաչափությանը (գլուխ III), ժողովրդական և աշուղական երաժշտության նմուշների վերլուծությանը (գլուխ IV), ազգային կոմպոզիտորական ստեղծագործությանը (գլուխ V): Գիրքն իսկույն ևեթ մտավ հայ երաժշտագետների գիտական շրջանառություն և դարձավ առավել հիշատակվող և մեջբերվող աղբյուրներից մեկը:

Ցավոք, դեռևս լույս չի տեսել Խուդաբաշյանի վերջին գործը՝ “О музыке и музыкантах” («Երաժշտության և երաժիշտների մասին») ստվարածավալ գիրքը (350 էջ), որն ընդգրկում է անցյալ տարիներին չհրատարակված կամ հրատարակության ընթացքում կրճատված, աղավաղված բազմաթիվ հոդվածների խմբագրված և լրացված տարբերակներ:

Կարինե Խուդաբաշյանը Հայաստանի առաջատար երաժշտագետներից էր: Նրա խոսքը մեծ կշիռ և հեղինակություն ուներ, սպասվում և ընկալվում էր հետաքրքրությամբ, միտք էր շարժում, հաճախ գիտական աշխույժ բանավեճերի առարկա դառնում, առաջ բերում հետևորդներ:

Ասում են՝ անփոխարինելի մարդիկ չեն լինում: Կարինե Խուդաբաշյանի՝ մտավորականի, գիտնականի, ազնվագարմ հայ Տիկնոջ նկատմամբ այս բանաձևը չի գործում:

***Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Անահիտ Բաղդասարյան***

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

- 1929թ. Կարինեն Էմանուելի Խուդաբաշյանը ծնվել է հուլիսի 7-ին Թբիլիսի քաղաքում:
- 1936–1940թթ. Սովորել է Երևանի Ա.Պուշկինի անվան միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցում, որն ավարտել է 1947թ.:
- 1952թ. Գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետը (գիտական ղեկավար՝ պրոֆ. Գ.Տիգրանով):
- 1953թ. Սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Ն.Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի և ապա ՀԽՍՀ ԳԱ (այժմ՝ ՀՀ ԳԱԱ) արվեստի ինստիտուտի ասպիրանտուրայում (գիտ. ղեկավար՝ Բ.Քուչնարյան):
- 1970թ. Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Բազմաձայնության զարգացման վաղ շրջանը հայ երաժշտության մեջ» թեմայով: Նույն թվականին Խուդաբաշյանին շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:
- 1960–1978թթ. Աշխատել է Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող:
- 1978–1984թթ. Աշխատել է Արվեստի ինստիտուտի երաժշտության պատմության և տեսության բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող:
- 1984–2005թթ. Ղեկավարել է Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժինը:
- 2005–2015թթ. Աշխատել է Արվեստի ինստիտուտի ժողովրդ-

դական երաժշտության բաժնում՝ որպես առաջատար գիտաշխատող:

1985–2015թթ. Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

1968–2015թթ. Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ:

1970–2015թթ. Հայաստանի թատերական գործիչների միության անդամ:

1975–1981թթ. Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի նախագահ:

1979–1998թթ. Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ:

1980–1989թթ. «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ:

2008թ. Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ վաստակագրով:

2013թ. Խուդաբաշյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

2013թ. Խուդաբաշյանին շնորհվել է դիպլոմ Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, Սփյուռքի նախարարության և Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության կողմից, լավագույն կոմպոզիտորական և երաժշտագիտական ստեղծագործությունների համահայկական մրցանակաբաշխության դափնեկիր ճանաչվելու համար:

2015թ. Նոյեմբերի 17-ին վախճանվել է Երևանում:

ОЧЕРК ЖИЗНИ И ТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КАРИНЕ ЭММАНУИЛОВНЫ ХУДАБАШЯН

Карине Худабашян – ученый, известный в Армении и за ее пределами, видный музыковед-теоретик, историк, публицист, музыкальный критик, организатор науки, многолетний заведующий отделом народной музыки Национальной академии наук Республики Армения, заслуженный деятель искусств РА, член Союза композиторов Армении, Международного Совета по традиционной музыке ЮНЕСКО (ICTM).

Карине Эммануиловна Худабашян родилась 7 июля 1929 года в г.Тбилиси. Происходит из дворянских фамилий Еревана и Лори – Худабашевых и Ханаговых, и потомственных интеллигентов Нахичевани – Едигаровых. Отец – Эммануил Исакович Худабашян, известный в свое время инженер-строитель, мать – Регина Семеновна Едигарова, одаренная пианистка и педагог.

Худабашян – выпускник Ереванской средней специальной музыкальной школы им.П.И.Чайковского по классу фортепиано Р.Х.Андриасяна. Ее педагогами были также М.А.Тонян, Л.М.Пулик, В.М.Белькевич, О.П.Гиносян и др.

В 1952 году Худабашян с отличием окончила теоретико-композиторский факультет Ереванской государственной консерватории им.Комитаса. Здесь ей преподавали М.А.Терьян (сольфеджио), Р.А.Атаян и Т.Г.Тер-Мартirosян (гармония), Г.М.Чеботарян (полифония), С.В.Коптев (анализ музыкальной формы), З.Г.Вартанян (всеобщая история музыки), Г.Г.Тигранов и А.А.Барсамян (история западно-европейской и русской музыки) и др.

В годы учебы Худабашян неоднократно выступала с докладами на студенческих научных конференциях (“Римский-Корсаков об опере”, “Пушкин в музыке” и т.д.). Дипломная работа “Симфоническое творчество Г.Егiazаряна” (научный руко-

водитель – проф. Г.Г.Тигранов), легла впоследствии в основу книги о композиторе.

С 1953 года Худабашян училась в аспирантуре Ленинградской (ныне – Санкт-Петербург) государственной консерватории им. Н.А.Римского-Корсакова, затем в Институте искусств Академии наук Армянской ССР под научным руководством профессора Х.С.Кушнарева.

Худабашян – воспитанница и последователь классиков современного музыковедения – Г.Г.Тигранова, Х.С.Кушнарева, Ю.Н.Тюлина. В формировании ее творческой личности значительную роль сыграли также видные музыковеды-фольклористы А.К.Кочарян, В.Л.Гошовский, и ее супруг, крупнейший историк, арменовед, востоковед Г.Х.Саркисян.

В основе многолетней плодотворной, многогранной научно-исследовательской деятельности Худабашян армянская музыка – традиционная (народная, ашугская), композиторская (классическая, современная). Круг научных интересов Худабашян широк и многообразен. Однако, приоритетным для ученого являлось главным образом теоретическое музыкознание. Так, в 1970г. была успешно защищена диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения под заглавием “Ранний этап развития многоголосия в армянской музыке” (научные руководители – проф. Х.С.Кушнарев и проф. Ю.Н.Тюлин). В 1977г. она была издана Институтом искусств АН Арм.ССР отдельной книгой под названием “Армянская музыка на пути от монодии к многоголосию”. Это первое теоретическое исследование, посвященное раннему, мало изученному, в то же время крайне важному для будущего армянской композиторской музыки, так называемому “докомитасовскому” периоду национальной композиторской школы. В нем прослеживаются процессы становления первичных многоголосных форм, своего рода гармонических “моделей” в армянской профессиональной музыке. Автор обращается к жизни и творчеству классиков армянской

музыки, непосредственных предшественников Комитаса – Х.Кара-Мурзы, Н.Тиграняна, М.Екмаляна, избравших путь многоголосной обработки армянских монодий – народных (крестьянских, городских), народно-профессиональных (ашугских), профессиональных (духовных и светских). В монографии впервые творчество названных композиторов рассматривается в русле традиций и тенденций развития европейской и, в частности, русской музыки 19-го, начала 20-го веков, и в аспекте создания произведений, синтезирующих в себе достижения общеевропейской музыки с самым широким спектром средств выразительности национального музыкального искусства. Именно этот ракурс позволил автору выявить и осмыслить ряд “нестандартных” с точки зрения классической европейской гармонии явлений в произведениях Кара-Мурзы и в особенности Тиграняна, Екмаляна. Анализ многоголосия здесь привел автора к заключению о том, что выбор аккордов, их последовательность, смена тональных планов и иные атрибуты гармонического языка в музыке названных композиторов, в большинстве своем, обусловлены ладовым своеобразием армянских монодий. Говоря иначе, уже на ранней стадии становления армянской композиторской школы “гармония вызревала на основе армянской монодии”¹, что, как известно, нашло отражение (каждый раз по-своему) в произведениях всех выдающихся армянских композиторов будущего. Данный теоретический аспект, избранный Худабашян был оценен, как значительный вклад в советское музыкознание².

Тот же ракурс взаимодействия лада с гармонией, “горизонтали” с “вертикалью” стал предметом рассмотрения в статье “О некоторых принципах обработки народного материала в

¹ См. рецензию проф. Ю.Н.Тюлина на кандидатскую диссертацию Худабашян от 14.06.70 г., с. 4. Хранится в архиве Института искусств НАН РА.

² Там же, с. 3.

творчестве А.Спендиарова” (Истоки стиля и его развитие)³.

Долгие годы Худабашян занималась проблемами лада, которые, как известно, составляют одну из основополагающих исследовательских областей армянского теоретического музыкознания. Начало ладовой темы закладывалось в диссертационной работе, где скрупулезный ладовой анализ множества армянских монодий позволил автору, как отмечалось выше, по-новому взглянуть на гармоническую структуру произведений первых армянских композиторов, увидеть в ней многоголосную проекцию ладовой специфики монодической музыки.

В другой работе того же периода “Кварто-квинтовая структура и ангемитоника в армянской народной песне”⁴, Худабашян, продолжая и развивая идеи, высказанные в свое время Сп.А.Меликяном, Х.С.Кушнаревым, К.В.Квиткой, и на основе примеров из музыкального фольклора, обосновывает особую характерность ангемитонных ладовых систем для армянской народной песни, усматривая именно в них причину возникновения кварт-квинтаккордов и иных созвучий нетерцового строения в произведениях Комитаса.

Далее, в работе “Античная система ладозвукорядов и ладозвукоряды армянской монодической музыки” (Опыт сравнительного анализа)⁵ ладовая тема развивается Худабашян в плане сравнительного музыкознания. Используя принципы построения

³ См. “Александр Спендиаров”, Статьи и исследования, АН Арм.ССР, Институт искусств, Ереван, 1973, сс. 52–85; см. также, Карине Худабашян, “Армянская музыка в аспекте сравнительного музыкознания”, Ереван, НАН РА, Институт искусств, 2011, сс. 218–245.

⁴ См. Третья республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов, Ереван, 1977, с. 157; статью – “Кварто-квинтовая структура и ангемитоника в армянской народной песне и в творчестве Комитаса” см. в “Армянская музыка в аспекте...”, сс. 80–93.

⁵ См. Конференция по вопросам истории и теории монодической музыки. Тезисы докладов, Ереван, 1984, сс. 47–51; статью см. в “Армянская музыка в аспекте...”, сс. 35–59.

ладозвукорядов, выработанных античными теоретиками, руководствуясь исследовательским опытом Комитаса, и в результате анализа образцов народных, народно-профессиональных и профессиональных монодий, Худабашян предлагает свой вариант “полной совершенной модулирующей системы двухоктавного ладового звукоряда”⁶, который, по мнению ученого, лежит в основе армянской монодической музыки и имеет ряд точек соприкосновения с античной системой ладозвукорядов. Последнее “является отнюдь не результатом влияния античной ладовой системы на систему ладов армянской монодической музыки, а следствием того, что античные ученые создали совершенную теорию монодической музыки, в которой отразились особенности монодической музыки ряда народов, находившихся в тесном контакте с древней Грецией и Византией”⁷.

Опыт интерференции звукорядов, т.е. “накладывания, соединения нескольких автономных звукорядов и определение их взаимной связи”⁸, использован Худабашян в исследовании “Трактовка ладовой системы армянской монодической музыки классиками армянского музыкознания” (Опыт интерференции звукорядов)⁹. Автор рассматривает ладовые концепции А.Лимонджяна, Н.Тиграняна, Комитаса, Сп.Меликяна, и, объединив их наблюдения, моделирует основанную на принципе интерференции, единую ладозвукорядовую схему, которая отражает специфические особенности ладовой системы армянской монодической музыки в представлениях классиков национального музыкознания.

⁶ См. “Армянская музыка в аспекте...”, с. 41.

⁷ Там же, с. 59.

⁸ Гошовский В.Л., “Горани. К типологии армянской песни” (Опыт исследования с помощью ЭВМ), Ереван, 1983, с. 55.

⁹ См. Шестая республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов, Ереван, 1988, сс. 248–250; статью см. в “Армянская музыка в аспекте...”, сс. 104–106.

Значительным вкладом в методологию изучения лада является исследование Худабашян “Система модулей и ее использование в описании ладовой структуры народной песни”¹⁰. Здесь, на основе анализа ладовой структуры целого массива армянских народных песен (около 1000), изданных в Армении с 1927 года, детально разработана, приведена в систему и представлена ладовая концепция автора, от определения понятий “лад”, “ладозвукоряд”, “интонация” и т.д. до количественных и качественных показателей лада. Одновременно в исследовании представлена разработанная автором цифрографическая система условных обозначений – модулей, посредством которых изображается ладовая структура песен. Система модулей была успешно апробирована В.Л.Гошовским при анализе ладовой структуры народной песни с помощью ЭВМ¹¹.

Система эта, в качестве аналитической программы, могла бы результативно использоваться и в современных компьютерных технологиях.

Логическим продолжением и развитием исследований по проблематике лада стала работа “Античная музыкально-космологическая концепция регистровой дифференциации полной совершенной системы и ее проявление в армянской музыке”¹². В ней ладозвукоряды армянской монодической музыки рассматриваются в плане музыкально-космологической концепции древности – модели первоэлементов Вселенной – тетрады (земля, вода, воздух, огонь) и пентады (земля, вода, воздух, огонь, эфир). Выявляются взаимосвязи регистра и ладовой структуры, регист-

¹⁰ Исследование написано в 1978г. Впервые опубликовано в сборнике “Традиции и современность” (Вопросы армянской музыки), книга 2, Ереван, НАН РА Институт искусств, Союз композиторов и музыковедов РА, 1996, сс. 127–140; см. также “Армянская музыка в аспекте...”, сс. 9–19.

¹¹ Гошовский В.Л., Горани, сс. 26–35, 55–56.

¹² См. Восьмая республиканская научная конференция по армянскому искусству. Тезисы докладов, Ереван, 1997, сс. 84–86; статью см. в “Армянская музыка в аспекте...”, сс. 60–79.

ра и жанра, принципы нотировки Комитаса, связанные с регистровыми зонами.

Худабашян обращалась также к проблемам слогоритмической структуры армянской народной и ашугской песни: “Аманак, Ванкачапутюн (Мора, Просодия)”¹³; “Стихотметрическая система ашугских песен в трактовке Гарегина Левоняна”¹⁴; “Стихотметрическое искусство ашуга Дживани”¹⁵.

